

**ՏԻՐՈՋ ՎԵՐԱԿԱՆՔՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՈԳՍԻ
ԵՎ ՆԵՐԿԱ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՆԱԽՔԱՆ ՆՐԱ ՎԵՐԱԳԱՐՉԸ**

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԳՐՈՒՅԹՆԵՐ

Աստվածաշնչի «տուփի» մեջ եղող «աղամանդն»
այն հայտնությունն է,
որ Աստված Քրիստոսի մեջ մարդ դարձավ,
որպեսզի մարդն Աստված դառնա կյանքով և բնությամբ,
բայց ոչ Աստվածությամբ՝ Քրիստոսի Մարմինը կառուցելու համար,
որն ավարտունացնում է Նոր Երուսաղեմը:

Աստվածային և առեղծվածային ոլորտը,
որի մեջ մենք այսօր կարող ենք մտնել և որում կարող ենք ապրել,
իրականում ոչ թե սուկ Եռամեկ Աստծու
աստվածային ու առեղծվածային ոլորտն է,
այլ ավարտունացած Հոգու և պնևմատիկ Քրիստոսի
աստվածային և առեղծվածային ոլորտը:

Քրիստոսի մեջ հարակայել՝ Նրան որպես մեր բնակատեղն ընդունելով,
և թույլ տալ Նրան, որ հարակայի մեր մեջ՝
մեզ որպես Իր բնակատեղն ընդունելով, նշանակում է
ապրել փրկագնված ու վերածնված հավատացյալների հետ
պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծու
տիեզերական ընդհանրականության իրականության մեջ:

Նոր Երուսաղեմը իրար հետ որպես մեկ ամբողջություն միաձուլված,
միախառնված և համակառուցված
աստվածայնության ու մարդկայնության համադրություն է.
բոլոր բաղադրիչներն ունեն նույն կյանքը, բնությունը և կազմությունը,
ուստի և ընդհանրական անձ են՝ Գառան հարսը, կինը:

Առաջին հաղորդում

**Աստծու տնտեսության վերջնական նպատակը.
Աստված մարդ դարձավ, որպեսզի մարդն Աստված դառնա
կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝
Քրիստոսի Մարմինը կառուցելու համար,
որն ավարտունացնում է Նոր Երուսաղեմը**

Գրվածքների ընթերցում. Եփս 1:4-5, 5:26-27, Եբր 2:10-11, Ա Թաղ 5:23

**I. Աստվածաշնչի «տուփի» մեջ եղող «ադամանդն» այն հայտնությունն է, որ
Աստված Քրիստոսի մեջ մարդ դարձավ, որպեսզի մարդն Աստված դառնա
կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ Քրիստոսի օրգանական
Մարմինը կառուցելու համար, որը կավարտունացնի Նոր Երուսաղեմը.**

Ա. «Այդքան տարիներից հետո Տերն ինձ թույլ է տվել իմանալ միայն մի բան. Աստված դարձավ մարդ, որպեսզի մարդը դառնա Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ: Սա իմ եզակի հոգսն է, իմ եզակի պատգամը» («Ինչպես գործնականում ապրել կյանք՝ համաձայն Սուրբ Գրվածքներում աստվածային հայտնության գազաթնակետի», էջ 34):

Բ. Աստծու հավիտենական տնտեսությունը մարդուն դարձնելն է նույնը, ինչ Ինքն է, կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ և Իրեն մարդու հետ մեկ դարձնելն ու մարդուն Իր հետ մեկ դարձնելը, ինչն Իրեն թույլ կտա Իր արտահայտության մեջ մեծացվել և ընդարձակվել, որպեսզի Իր բոլոր աստվածային հատկանիշներն արտահայտվեն մարդկային առաքիլությունների մեջ՝ Ա Տմբ 1:3-4, Եփս 3:9, 1:10:

Գ. Աստված մարդուն հատուկ կերպով ստեղծեց, այն է՝ Իր պատկերով և ըստ Իր նմանության, ինչպես նաև հոգով, որպեսզի մարդը հավի Նրան ու ընդունի Նրան. Աստված մարդկային տեսակ չստեղծեց, Նա մարդուն ըստ Իր տեսակի ստեղծեց՝ Ծնդ 1:26, 2:7, Չք 12:1:

Դ. Աստված մարդ դարձավ, որպեսզի ձեռք բերի Իր զանգվածային վերարտադրությունն ու դրանով իսկ նոր տեսակ առաջացնի՝ Հվի 1:1, 14, 12:24.

1. Այս նոր տեսակը ո՛չ Աստծու տեսակն է, ո՛չ էլ մարդու տեսակը, սա աստվածամարդկային տեսակն է:

2. «Իմ հոգար ձեզ հատակորեն ցույց տալն է, որ Աստծու տնտեսությունն ու ծրագիրը Իրեն մարդ դարձնելն է և մեզ՝ Իր արարածներին, Աստված դարձնելը, այնպես որ Նա «մարդացվի», իսկ մենք՝ «աստվածացվենք»» (*«Աստվածային բաշխման առավել խոր ուսումնասիրություն»).

ա. Մենք ծնվում ենք մեծ Աստծուց, ուստի դառնում ենք Աստված կյանքով և բնությամբ, բայց, իհարկե, ոչ Աստվածությամբ. մենք Աստծու՝ որպես մեզ Սկզբնավորողի հետ նույն շարքին ենք

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

դասված, և մենք Նրա զավակներն ենք՝ Գղտ 4:6, Եսայ 63:16, 64:8, 66:12-13:

բ. Նա Աստվածամարդ դարձավ, որպեսզի մարդը Մարդաստված դառնա. ի վերջո Նա և մենք նույն դասին, նույն տեսակին ենք պատկանում և նույն մակարդակի վրա ենք:

Ե. Աքանասը՝ եկեղեցու վաղ հայրերից մեկը, Քրիստոսի մասին ասել է. «Նա դարձվեց մարդ, որպեսզի մենք դարձվենք Աստված», և «Խոսքը մսեղի դարձվեց.... որպեսզի մենք, Նրա Հոգուն հաղորդ լինելով, աստվածացվենք»:

II. Իր մարդ դառնալու մեջ հավիտենական և Եռամեկ Աստծու ամենասքանչելի, գերազանց, խորհրդավոր և համաբովանդակ փոխակերպումներն Աստծու շարժումն են մարդու մեջ՝ Իր հավիտենական տնտեսությունն իրագործելու համար՝ Հվի 1:14, 29, 3:14, 12:24, Գրծ 13:33, Ա Պտ 1:3, Ա Կրք 15:45բ, Գրծ 2:36, 5:31, Եբր 4:14, 9:15, 7:22, 8:2.

Ա. Այս փոխակերպումներն այն գործընթացներն են, որոնք Եռամեկ Աստված անցավ այն բանում, որ Նա Աստվածամարդ դարձավ, աստվածայնությունը բերեց մարդկայնության մեջ և աստվածայնությունը մարդկայնության հետ միաձուլեց որպես բազում Աստվածամարդկանց «զանգվածային վերարտադրության» նախօրինակ. Նա դարձավ Եռամեկ Աստծու մարմնավորումը՝ Աստծուն բերելով մարդուն և Աստծուն դարձնելով Մեկը, ում հետ մարդը կարող է այժմ շփվել, ում կարող է դիպչել, ընդունել, փորձառաքար ապրել, ում մեջ կարող է մտնել և ում կարող է վայելել՝ Հվի 1:14, 12:24, Կդս 2:9:

Բ. Աստված այս փոխակերպումների մասին խոսում է Օվս 11:4-ում՝ ասելով. «Ես նրանց ձգեցի մարդու պարաններով, սիրո կապերով». «մարդու պարաններով, սիրո կապերով» արտահայտությունը ցույց է տալիս, որ Աստված սիրում է մեզ Իր աստվածային սիրով ոչ թե աստվածայնության մակարդակում, այլ մարդկայնության. Աստծու սերն աստվածային է, բայց այն մեզ հասնում է մարդու պարաններով, այսինքն՝ Քրիստոսի մարդկայնության միջոցով.

1. Պարանները (փոխակերպումները, գործընթացները), որոնց միջոցով Աստված մեզ ձգում է, ներառում են Քրիստոսի մարմնացումը, մարդկային ապրելակերպը, խաչելությունը, հարությունը և համբարձումը. Իր մարդկայնության մեջ Քրիստոսի այս բոլոր քայլերի միջոցով Աստծու սերն Իր փրկության մեջ հասնում է մեզ՝ Երմ 31:3, Հվի 3:14, 16, 6:44, 12:32, Հռմ 5:5, 8, Ա Հվի 4:8-10, 16, 19:

2. Քրիստոսից զատ՝ Աստծու հարատև սերը, Նրա անփոփոխ, գերող սերը, չէր կարող մեզ ենթարկել. Աստծու անփոփոխ սերը ենթարկում է, որովհետև դա սեր է Քրիստոսի մեջ, Քրիստոսի հետ, Քրիստոսի շնորհիվ և Քրիստոսի համար:

3. Չնայած մեր ձախողումներին և սխալներին՝ Աստծու սերը միշտ հաղթական է. սերը ողջ է մնում ցանկացած պայմաններում և մշտա-

ԱՍՏԾՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

պես մնում է իր տեղում. միայն սերն է բնորոշում հասուն մարդուն և տևում է հավիտյան՝ Հռմ 8:35-39, Ա Կրթ 13:8-11, Երմ 31:3:

Գ. Վաղենի ժամանակներից՝ հավիտենության օրերից, Եռամեկ Աստված պատրաստվում էր դուրս գալու հավիտենությունից և ժամանակի մեջ մտնելու՝ Իր աստվածայնությամբ մարդկայնության մեջ մտնելու՝ Բեթ-ղեհեմում որպես մարդ ծնվելով՝ Մք 5:2.

1. Մարմնացման նպատակը Աստծուն մարդու մեջ բերելն էր և Աստծուն մարդ դարձնելը, որպեսզի մարդն Աստված դառնար Նրա կյանքով և Նրա բնությամբ, բայց ոչ Նրա Աստվածությամբ. Նա եզակի Աստված է, ում մարդիկ պետք է երկրպագեն Իր Աստվածության մեջ, իսկ մենք Աստված ենք միայն կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ:

2. Աստծու շարժումն իրագործվում է մարդու մեջ և մարդու միջոցով, որպեսզի աստվածացնի մարդուն՝ նրան դարձնելով Աստված կյանքով, բնությամբ, գործառույթով և արտահայտությամբ, բայց, իհարկե, ոչ Աստվածությամբ. քանի որ «Հոգին՝ Սուրբը» բաշխվել է մեր հոգու մեջ, մենք և Հոգին մեկ հոգի ենք (Հռմ 8:16, Ա Կրթ 6:17), և մեր հոգին այժմ «սուրբ հոգի» է (Բ Կրթ 6:6):

3. Ուստի որպես Աստվածամարդիկ՝ մենք չպետք է որևէ գործողություններ ձեռնարկենք, որևէ իրավիճակ դիմավորենք կամ որևէ կարիք բավարարենք համաբովանդակ Հոգուց զատ. ճանապարհը, որին այսօր պետք է հետևենք, Հոգու շարժման մեջ շարժվելու և մեր շարժման մեջ Հոգու շարժումն ունենալու ճանապարհն է՝ Հյտ 22:17ա, Հռմ 8:4, Գղտ 5:25, Հռմ 1:9, Փլյ 3:3, հմմտ Եզկ 1:15-21:

4. Գործքում մարդը շարժվում էր Աստծու շարժման մեջ, իսկ Աստված շարժվում էր մարդու շարժման մեջ. արդյունքում առաքյալներն Աստծու պաշտոնակատարը դարձան, այսինքն՝ Աստված ըստ գործառույթի՝ 16:6-10:

III. Կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ մեր՝ Աստված դառնալուն սկիզբ է դրել Հայր Աստված անցյալ հավիտենությունում այն բանի միջոցով, որ Նա մեզ ընտրեց, որպեսզի սուրբ լինենք, մեզ նախասահմանեց որդիության. աստվածային սրբացումը՝ աստվածային որդիության համար, աստվածային տնտեսության կենտրոնն է և Նոր Կտակարանի հայտնության կենտրոնական միտքը՝ Եփս 1:4-5.

Ա. Սրբացվել նշանակում է սուրբ դարձվել, այսինքն՝ առ Աստված առանձնացված լինել ու հազեցած լինել Աստծով՝ որպես Սրբով, Նրանով, ով տարբերվում է, զանազանվում ամեն առօրեական բանից՝ Ա Պտ 1:15-16, Եփս 1:4-5:

Բ. Նա մեզ ընտրեց Քրիստոսի մեջ աշխարհի հիմնադրումից առաջ, որպեսզի սուրբ լինենք՝ բնությամբ Աստված դառնալու համար (Խ. 4). Աստված միակն է, ով սուրբ է. որպեսզի սուրբ լինենք, մեզ անհրաժեշտ է, որ Աստված Իր սուրբ բնության մեջ բաշխվի մեր մեջ, և այս սուրբ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

բնությունը դառնում է այն սուրբ տարրը, որով Սուրբ Հոգին սրբացնում է մեզ (Բ Պտ 1:4, Եբր 12:14):

Գ. Նա մեզ որդիության նախասահմանեց նույնիսկ նախքան մեր ստեղծվելը, որպեսզի Աստված դառնանք կյանքով (Եփս 1:5). որպեսզի Աստծու որդիներ դառնանք, պետք է Աստծուց ծնվենք՝ մեր էության մեջ Աստծու կյանքի բաշխման շնորհիվ (Հվի 1:12-13, 3:6, Ա Հվի 5:11-12).

1. Եփս 1:4-5-ը բացահայտում է, որ Աստված մեզ ընտրեց, որպեսզի սուրբ լինենք, այն նպատակով, որ մենք Աստծու որդիներ դառնանք. սուրբ դարձվելը գործընթացն է, ընթացակարգը, մինչդեռ Աստծու որդիները լինելը նպատակն է՝ նշանակետը, այն է՝ մեր ողջ էության, ներառյալ մեր մարմինը (Հռմ 8:23), Աստծու կողմից «որդիացվելը» (Հյտ 21:2, 9-11):

2. Եբր 2:10-11-ը բացահայտում է, որ հարուցյալ Քրիստոսը՝ որպես Աստծու փրկության Պարագլուխը, Հեղինակը, բազում որդիների փառքի մեջ է բերում նրանց սրբացնելու միջոցով:

IV. Աստվածային սրբացումը պահող գիծն է աստվածային տնտեսությունն իրականացնելու մեջ, որի նպատակը մեզ աստվածայնորեն «որդիացնելն» է՝ մեզ դարձնելով Աստծու որդիները, որպեսզի դառնանք նույնը, ինչ Աստված է, Նրա կյանքով և Նրա բնությամբ (բայց ոչ Նրա Աստվածությամբ), այնպես որ լինենք Աստծու արտահայտությունը. հետևաբար Աստծու սրբացումն աստվածային «որդիացումն» է.

Ա. Մենք ասում ենք, որ սրբացումը պահող գիծն է, քանի որ մեզ վրա Աստծու աշխատանքի յուրաքանչյուր քայլը մեզ սուրբ դարձնելն է. Աստծու հավիտենական տնտեսությունն իրականացնելը տեղի է ունենում Հոգու սրբացման շնորհիվ՝ Ա Թաղ 5:23, Հվի 17:17, Եփս 5:26-27, Ա Կրթ 6:11, 12:3բ, Եբր 12:4-14, Հռմ 8:28-29, Եփս 4:30, Ա Թաղ 5:19, Հյտ 2:7ա, Սղմ 73:16-17, 25-26:

Բ. Փնտրող սրբացումը՝ սկզբնական սրբացումը, սրբացումն է առ ապաշխարություն, որի նպատակը մեզ դեպի Աստված վերադարձնելն է՝ Ա Պտ 1:2, Ղկս 15:8-10, 17-21, Հվի 16:8-11:

Գ. Փրկագնող սրբացումը՝ սրբացումն ըստ դիրքի, կատարվում է Քրիստոսի արյամբ (Եբր 13:12), որպեսզի մեզ Ադամից Քրիստոսի մեջ փոխադրի՝ Եբր 13:12, 9:13-14, 10:29:

Դ. Վերածնող սրբացումը՝ ըստ նախահակման սրբացման սկիզբը, նորոգում է մեզ՝ մեր հոգուց սկսած, որպեսզի մեզ՝ մեղավորներիս, Աստծու որդիներ դարձնի՝ նոր ստեղծագործություն աստվածային կյանքով ու բնությամբ՝ Հվի 1:12-13, Բ Կրթ 5:17, Գղտ 6:15:

Ե. Նորոգող սրբացումը՝ ըստ նախահակման սրբացման շարունակությունը, նորոգում է մեր շունչը՝ սկսած մեր մտքից մինչև մեր շնչի բոլոր մասերը, որպեսզի մեր շունչը դարձնի Աստծու նոր ստեղծագործության մասը՝ Հռմ 12:2բ, 6:4, 7:6, Եփս 4:23, Եզկ 36:26-27, Բ Կրթ 4:16-18:

- Ձ. Փոխակերպող սրբացումը՝ ամենօրյա սրբացումը, նյութափոխանակորեն մեզ վերակազմում է Քրիստոսի տարրով, որպեսզի մեզ դարձնի նոր կազմություն՝ որպես Քրիստոսի օրգանական Մարմնի մաս՝ Ա Կրթ 3:12, Բ Կրթ 3:18:
- Է. Կերպարանակցող սրբացումը՝ ձև հաղորդող սրբացումը, մեզ փառավոր Քրիստոսի ձևն է տալիս, որպեսզի մեզ դարձնի Քրիստոսի արտահայտությունը. մեր կերպարանակցումը մեր հասունությունն է աստվածային կյանքում, և դրա միջոցով մենք լիարժեքորեն մասնակցում ենք Աստծու աստվածայնությանը և հաստատվում ենք Նրա աստվածային տարրին տիրելու մեջ՝ Հռմ 8:28-29, Եբր 6:1ա:
- Ը. Փառավորող սրբացումը՝ ավարտունացնող սրբացումը, փրկագնում է մեր մարմինը՝ այն այլակերպելով, որպեսզի մեզ դարձնի Քրիստոսի արտահայտությունը լեցունության ու փառքի մեջ՝ Փլպ 3:21, Հռմ 8:23:
- V. Ըստ նախահակման աստվածային սրբացումն իրագործվում է Քրիստոսի՝ որպես կենդանարար, սրբացնող և խոսող Հոգու կողմից՝ Ա Կրթ 15:45բ, Ա Թսղ 5:23, Եփս 5:26.**
- Ա. Քրիստոսը՝ որպես կենդանարար Հոգին, սրբացնում է եկեղեցուն՝ մաքրելով նրան խոսքում ջրի լվացման համաձայն. աստվածային պատկերացման համաձայն՝ «ջուրն» այստեղ վերաբերում է Աստծու հոսող կյանքին, որի նախատիպը հոսող ջուրն է (Ելց 17:6, Ա Կրթ 10:4, Հվի 7:37-39, Հյտ 7:17, 21:6, 22:1, 17). հիմա մենք այսպիսի լվացման գործընթացում ենք, որպեսզի եկեղեցին սուրբ ու անարատ լինի:
- Բ. Եփս 5:26-ում որպես «լվացում» թարգմանված հունարեն բառը բառացի «լվացարան» է նշանակում. Հին Կտակարանում քահանաները լվացարանն օգտագործում էին, որպեսզի իրենց վրայից լվանային երկրային պղծությունը (Ելց 30:18-21). օրեցօր առավոտյան և երեկոյան մենք պետք է գանք Աստվածաշնչին և մաքրվենք խոսքում ջրի՝ լվացարանի միջոցով:
- Գ. Պողոսն օգտագործում է հունարեն «ռեմա» բառը, երբ խոսում է խոսքի և դրանով լվացվելու գործընթացի մասին (Եփս 5:26). «լոգոս»-ն Աստծու Խոսքն է, որ օբյեկտիվորեն գրառված է Աստվածաշնչում. «ռեմա»-ն Աստծու խոսքն է, որն ասվում է մեզ որոշակի իրավիճակում (Մրկ 14:72, Ղկս 1:35-38, 5:5, 24:1-8):
- Դ. Որպես կենդանարար Հոգին՝ Քրիստոսը խոսող Հոգին է. ինչ էլ Նա ասում է, մեզ լվացող խոսք է. սա վերաբերում է ոչ թե «լոգոսին»՝ մշտական խոսքին, այլ «ռեմային», որը ակնթարթային խոսքն է մատնանշում, խոսք, որը Տերը ներկա պահին ասում է մեզ՝ Մտթ 4:4, Հվի 6:63, Հյտ 2:7, 22:17ա, հմմտ Եսյ 6:9-10, Մտթ 13:14-15, Գրծ 28:25-31:
- Ե. «Ռեման» ինչ-որ բան է բացահայտում մեզ համար անձնապես ու անմիջականորեն. այդ խոսքը ցույց է տալիս, թե ինչին պետք է վերջ դնենք և ինչից պետք է մաքրվենք (բրոնզե լվացարանը յուրատեսակ հայելի էր, որը կարողանում էր արտացոլել ու մերկացնել՝ Ելց 38:8). յուրաքանչյու-

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

րիս համար կարևոր է հետևյալը. «Արդյո՞ք Աստված ինձ ասում է Իր խոսքն այսօր»՝ Հյտ 2:7, Ա Թգ 3:1, 21, Ամս 3:7:

- Ձ. Մենք միշտ գնահատում ենք մեկ բանը՝ այն, որ Տերը շարունակում է մեզ հետ այսօր խոսել անձնապես ու անմիջականորեն. կյանքում ճշմարիտ աճը կախված է խոսքն անմիջականորեն Աստծուց մեր ստանալուց. միայն մեր մեջ Նրա խոսելը ճշմարիտ հոգևոր արժեք ունի՝ Եբր 3:7-11, 15, 4:7, Սղմ 95:7-8:
- Է. Մեր աղոթքների կենտրոնական դրույթը պետք է Տիրոջ խոսելը լսելու մեր փափագը լինի, որը մեզ թույլ է տալիս կատարել Նրա հավիտենական տնտեսության նպատակը՝ Նրա սրտի ցանկության համաձայն, այն է՝ Իր աստվածային որդիությունն ունենալ՝ Ղկս 1:38, 10:38-42, Եփս 1:5:
- Ը. Շատ գործնական իմաստով Տիրոջ ներկայությունը մեկ է Նրա խոսելու հետ. ամեն անգամ, երբ Նա խոսում է, մենք գիտակցում ենք Նրա ներկայությունը մեր ներսում. Քրիստոսի խոսելը կենդանարար Հոգու բուն ներկայությունն է՝ հմմտ Ելց 33:12-17, Եբր 11:8:
- Թ. Մեր ներսում բնակվող Քրիստոսի՝ որպես կենդանարար Հոգու խոսելը մաքրող ջուր է, որ մեր մեջ նոր տարր է ներդնում, որը փոխարինում է մեր բնության ու նախահակման մեջ եղող հին տարրին. այս նյութափոխանակական մաքրումը կյանքում իսկական ու ներքին փոփոխություն է առաջացնում, որը ըստ նախահակման սրբացման ու փոխակերպման իրականությունն է:

VI. Աստվածային որդիության համար մեր սրբացվելը ի վերջո ավարտունանում է Նոր Երուսաղեմում՝ որպես սուրբ քաղաքում (Հյտ 21:2, 10) և աստվածային որդիության հանրագումարում (Խ. 7). սա այն բանի վերջնական ավարտունությունն է, որ Աստված մտեղիում մարդ դարձավ, որպեսզի մարդը դառնա Աստված Հոգում՝ ընդհանրական, մեծ Աստվածամարդուն (Խխ. 3, 22) ձեռք բերելու նպատակով՝ Եռամեկ Աստծու ընդհանրական արտահայտության, փառքի համար (Խխ. 11, 23):